ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Այսօր, երբ Փրկչի Իշման Ս. Տաճարեն Հայոց, վերստին կավետվի մեզի ամենուս Ս. Ծնունդը և Աստվածահայտնությունը աշխարհի լույս Հիսուսի Քրիստոսի, Մենք ջերմագին խնդությամբ կբերենք Մեր սիրո ողջույնը և օրհնությունը և ամենաբարի մաղթանքները Ձեզ, Ձեր հոգևոր դասուն, թեմական և եկեղեցական Ձեր կազմակերպությանց բոլոր հարգարժան անդամներուն և համայն Մեր հավատացյալ զավակներուն, աղոթելով, որ մարդիկ ու ազգերը բոլոր բանան իրենց հոգիները ու տեսնեն ճշմարտապես փառքը լույսին, որ երկինքեն կիջնե, որպեսզի աշխարհն ու մարդկությունը համայն հասնին տևական խաղաղության ու արդարության ափին:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Որդվույն Աստուծո խաղաղարար կամքով, թող ապրի ու ծաղկի նաև Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցին, եղբայրական սիրո և միության մեջ, այժմ և հավիտյան:

Շնորհավոր նոր տարի և Ս. Ծնունդ:

Սիրով և օրհնությամբ,

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանին (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պր. Կ. Ալթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչության (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս.

Նոր տարվան և Ս. Ծննդյան տոնին առթիվ Ձերդ Վեհափառության կներկայացնենք Մեր սրտալից ջերմ շնորհավորությունները:

Ի խորոց սրտի Մեր մաղթանքն է, որ ամենաբարին Աստված պարգևե Ձեզի մշտատև առողջություն և երջանկալից երկար կյանք:

Կաղոթենք, որ Խաղաղության Իշխանը, Տեր Հիսուս Քրիստոս, խաղաղություն շնորհե աշխարհի համայն մարդկության և անշարժ ու անսասան պահե ու պահպանե Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, մեր նվիրապետական Ս. Աթոռները և հավատացյալ հայ ժողովուրդը՝ ի խնամս մարդասիրության յուրո:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

*

Նոր տարվան և Ս. Ծննդյան տոներու երջանիկ առիթով, մեր և Սրբոց Հակոբյանց մեր միաբանության կողմե, խոնարհաբար կներկայացնենք մեր սրտագին բարեմաղթությունները և կաղոթենք, որ Ամենակալը Ձերդ Ս. Օծության շնորհե մնայուն առողջություն և երկար, երջանիկ տարիներ՝ հաջողություններով և բարօրությամբ, ի հաստատություն և ի պայծառություն մեր Մայր Եկեղեցիին՝ Ս. Էջմիածնին:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի երջանիկ առիթներով, կուգանք մեր կողմե և հանուն Պատրիարքությանս հոգևորական դասուն, պաշտոնական բոլոր մարմիններուն և համայն հավատացյալ հոտին, շնորհավորել Ձերդ Ս. Օծությունը և մաղթել Վեհիդ և Մայր Աթոռի միաբանության երջանիկ տոնակատարություն: Կաղոթենք այս առթիվ, որ Աստված շնորհե Սրբությանդ երկար ու քաջառողջ կյանք և արդյունաշատ պաշտոնավարություն:

ՍՏԱՄԲՈՒԼ

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

*

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: